

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԱԿՈՒ ՄԱՍԻՆ

Հասարակության կյանքում ու կինցադում խոշոր գեր խազացող առարկաներից մեկը ապահին մարդն ստեղծել է դեռևս հեռավոր անցյալում, 5—6 հադար տարի առաջ. Առայժմ ճիշտ հայտնի չէ նրա հայտնագործման վայրը, Գիտնականներից ոմանք առաջնությունը տալիս են Եղիպտոսին, մյուսները՝ Առաջավոր Ասիային. Վերջին տեսակետը պաշտպանող դիտնականներից Ֆլինդերս Պետրին, դեռևս անցյալ դարի վերջերին, ենթադրում էր, թե ապակյա ամենահին առարկաները պատրաստվել են Միջագետքի հյուսիսային շրջաններում կամ, հնարավոր է, Կովկասում, որտեղ ապակու արտադրության կենտրոններն ավելի վաղ են գոյություն ունեցել, քան մյուս երկրներում, այդ թվում նաև Եգիպտոսում. Ըստ նրա, սեղոսի ափերին գանգած ապակյա առարկաները, որոնք վերաբերում են 1 դինաստիային և ավելի վաղ շրջաններին. Ներմուծվել են Ասիայից<sup>1</sup>. Չնայած Ֆլինդերս Պետրի առաջադրած վարկածը պաշտպանություն է դանում ուսումնասիրողների մի մասի կողմից<sup>2</sup>, սակայն. Միջագետքում և Կովկասում հայտնաբերված III—II հազարամյակին պահանջան նյութերի սակավությունը թույլ չի տալիս առաջնությունը տալու այս կամ այն երկրին<sup>3</sup>: Հնարավոր է, որ ապակին հայտնագործվել է իրարից անկախ տարբեր ժողովուրդների մոտ, տարբեր ժամանակ:

Ապակյա հնադույն հայստի առարկաները, զիսավորապես ուղունքներ և կնիքներ են, որոնք բարե ուղունքների և կնիքների ընդօրինակությունն են հանդիսանում: Հետազում, եթե տեխնիկայի ընդհանուր վերելքը և ապակեղործության զարգացումը հնարավորություն տվեցին ստեղծելու ապակու մշակման նոր մեթոդներ, պատրաստվել են նաև խոշոր անոթներ: Արդեն հելլենիստական շրջանում, բարձր չերմասսիձան ստանալու շնորհիվ, բարելավվեց ապակու բազադրությունը, որը մոտեցավ այսօրվանին. Ամենակարևոր դյուտը մեր թվականության նախօրյակին փշելու եղանակի հայտնագործումն էր, որը հեղաշրջում առաջացրեց ապակեղործության տեխնիկայի մնջ:

Այդ դյուտի ժամանակի և տեղի վերաբերյալ ևս տարակարծություններ

<sup>1</sup> Flinders Petrie, Glass in the early ages. Journal of Society of Glass Technology, vol. X, № 39, 1926, էջ 299 և հետո.

<sup>2</sup> B. B. Lal, Examination of Some ancient Indian Glass, Specimens Ancient India, № 8, New Delhi, 1952, էջ 17; E. Berger, Glasbereitung und glas Rohstoffmenge von Zweitausendfünf hundert Jahren. Glastechnische Berichte, Bd. 5, Heft 4, 1927, էջ 160 և հետո.

<sup>3</sup> W. E. S. Turner, Studies of ancient glass and glass-making processes. P. II, Journal of the Society of Glass Technology, vol. 38, № 184, 1954, էջ 445:

կան։ Գիտնականների մի մասը նախապատվությունը տալիս է Ալեքսանդրիացին, մրուար՝ Սիրիային<sup>4</sup>։

Բոլոր դեպքերում և Ալեքսանդրիաս, և Ափոնը տվյալ ժամանակաշրջանի ապակեգործության ամենախոշոր ու ամենազարգացած կենորոններն էին, ուստի այն պնդումը, թե դրանցից որն է եղել փշելու Եղանակի ստեղծողը, սկզբունքաւին նշանակություն չունի։ Օաա հնարավոր է, որ մ. թ. ա. I դարում այդ դյուտն արգել է և Արիայում, և Եղիպտոսում միաժամանակ կամ ժամանակի ոչ մեծ տարրերությամբ։ Տիյալ դեպքում կարեռն այն է, որ փշելու Եղանակը հնարավորություն ունեց ազատ, նոր ու ինքնատիպ ձեեր ստեղծել, անցնել մասսայական արտապրության, որն իր հերթին իշեցրեց ապակյա առարկաների արժեքը, նպաստեց նրանց տարածմանը։

Հայաստանում, առաջմ ապակու ամենահին դյուտերը հանդիսանում են Լաշենի մ. թ. ա. II հաղարամյակի կեսերին պատկանող զամբարաններից հայտնաբերված ուղունքները<sup>5</sup>։ Հայաստանից դանված վաղ շրջանի ապակու ամենահետաքրքիր օրինակների թվին են պատկանում 1953 թ. Կարմիր բլուրում հայտնաբերված կանացք ֆիզուրա պատկերով սկահակի վերին մասը և ալաբաստրի վիզը, որոնք, ինչպես պարզված է, ոռղոսյան ծաղում ունեն։ Ծրիուն է, պատրաստված են անթափանցիկ հաստ ապակուց, առաջինը կավի կազապարի մեջ, երկրորդը՝ ավազե միջուկի օգնությամբ։ Կարմիր բլուրից հայտնի են նաև դանաղան տեսակի ուղունքներ, դրանց թվում նաև աճապիսիները, որոնք պատրաստված են բարձրորակ թափանցիկ ապակուց<sup>6</sup>։

Ապակյա ուղունքներ, կնիքներ և ձարմանդներ հայտնաբերվել են նաև Հայաստանի մազ հայկական (VI—IV դդ. մ. թ. ա.) և հելենիստական (III—I դդ. մ. թ. ա.) դարաշրջանների մի շարք հուշարձաններում։

Հնագիտական հայտնադուռը վկայում են, սակայն, որ Հայաստանում ապակյա իրերն ու առարկաները լայն տարածում են ստանում անտիկ շրջանում։

Հայաստանում հայտնաբերված I—IV դդ. պատկանող ապակյա անոթների մեջ իր մշակմամբ, բարդ ու զեղեցիկ զարդերով մեծ հետաքրքրություն է ներկայացնում Վերին Արտաշատ դյուղում, կարասային թաղումից հայտնաբերված զրեթե գլանաձե իրանու տնկանթ սրվակը (ՊՊթ 2112/1), Այն կապտավուն բարակ ապակուց է պատրաստված, կաղապարի մեջ փշելու եղանակով, նրա ամբողջ իրանը ուսուցիկ, զեղեցիկ սյուներով բաժանված է վեց մասի։ Այսուների վերելում և ներքելում արված են ծաղկաշղթա հիշեցնող (դիրլյանդաձի) զարդեր (նկ. 1), Բաժանմունքներից յուրաքանչյուրում կան տտրքեր անոթների՝ ամֆորաների, հիղրիայի, կանթարոսի ուսուցիկ պատկերներ (բարձ. 8 սմ, պատկի տր. 2,2 սմ, հատ. տր. 2,8 սմ)։

<sup>4</sup> А. А. Абдуразаков, М. А. Безбородов, Ю. А. Заднепровский. Стеклоделие Средней Азии в древности и средневековье, Ташкент, 1963, էջ 60, այդ մասին դրականություն տե՛ս նույն տեղում։

<sup>5</sup> Այդ մասին մեզ հաղորդել է արշավախմբի պետ Հ. Ա. Մնացականյանը,

<sup>6</sup> Р. М. Джанполадян, О трех образцах стекла из Кармир-Блур, СА, № 1, 1964, էջ 307 և հետ. նկ. 1, 3, 5, 6, Բ. Б. Пиотровский, Кармир-Блур, III, էջ 51, տախտ. II, 10, 11։


<sup>7</sup> Առիթից օդովելով շնոր ակալություն ենք հայտնում պրոֆ. Կ. Ղաֆաղարյանին՝ Վերին Արտաշատի նյութերը սիրով մեղ տրամադրելու համար։

Վերին Արտաշատի սրվակն իր ուսուցիկ զարդերով առաջինը չէ Հայաստանում։ Անոթների ուսուցիկ պատկերներով սրվակ հայտնաբերվել է նաև Գառնիում (ՊՊԹ 1964/121)։ Վերջինս չնայած ավելի վատ է մշակված, սակայն նկատելի են բաժանումներ (6 մասի), որոնք վերևից իրար հետ կապված են աղեղներով։ Սրվակը կոտրված է, որոշ մասեր պակասում են, բայց իրանի պահպանված մասերի վրա երեսում են ամֆորաներ, եռաստիճան բարձ-

րացող կլոր վահան, կանթարոս և քառանկյուն դարդ (նկ. 2)։ Սրվակը կապտավուն, անհավասար գույն ունեցող բարակ ամրակուց է պատրաստված։ Կանթը կանաչավուն է։ Հատակութիւնը կանթը կանթական է (բարձր. 8 սմ, պսակի տր. 2,8 սմ, հատ. տր. 2,8 սմ)։



Նկ. 1.



Նկ. 1ա.

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման զարդերը բնորոշ են Սիդոնի մ.թ. I դարի արաագրանքին, իսկ Շառնիի սափորի զարդերը սեծ նմանություն ունեն սիդոնյան սրվակներին նախշերին։ Ուստի սափորն համարվում է սիդոնյան մ.թ. I դարի արաագրանք։

Վերին Արտաշատի սրվակը ևս աղերսվում է սիդոնյան անոթների ուսուցիկ պատկերներով սրվակների հետ, սման զարդերով մի քանի սրվակներ պահպանվում են Նյու-Յորքում<sup>8</sup>, Դրանցից Վերին Արտաշատի սրվակին հար և նման են երկուսը Ռ. Սմիթը գտնում է, որ դրանք կարող են լինել սիրիական, հնարաւոր է սիդոնյան, և մեկը թվագրում է մ.թ. I դ. (№ 80), մյուսը (№ 27)՝ I-II դարերով։ Այս խմբին պատկանող մյուս անոթները ևս նա համարում է սրդոնյան I դարի արտագրանք։ Մրանց ամենատարածված զույնը բատ. Ռ. Սմիթի կապույտն է։ Սակայն պատահում են նաև այլ զույներ։ Օրինակ, գեղնավուս ապակուց աատրաստված նման մի սրվակ արեւամիշերկրածովյան արհեստանոցների I-II դդ. արտագրանք է համարվում։

<sup>9</sup> Ալգենը քննության ամենելով ուսուցիկ զարդերով և աարբեր ապակուց պատրաստված մի քանի տասնյակ սրվակներ, գտնում է, որ դրանք արտագրվել են Սիդոնում մ.թ. ա. և մ.թ. I դարերում։ Մետրոպոլիտեն թանգարա-

8 Г. А. Тиранян, О торговых связях Армении с Сирсией в античное время. Палестинский сборник, № 4, 1959, լ. 73 և հետ.


9 R. W. Smith, Glass from the ancient world. Corning, New-York, 1957 Ակ. Ակ. 76, 77, 78, 80.

Նի այդպիսի սրվակներից յոթը, թե չափերով և թե ձեռվ ու զարդերով շատ նման են Վերին Արտաշատի սրվակին<sup>10</sup>:

Առանց կանթի, տարբեր անոթներ պատկերող ուսուցիկ զարդերով սրվակներ հայտնաբերվել են Կիպրոսում, Սիրոսում, Տորոսայում, որոնք բոլորն եւ պատրաստված են դեղնավուն բարակ ապակուց: Այդպիսի մի սրվակ



Նկ. 2.



Նկ. 2ա

պատրաստված սրվակների հետ, որոնք պատկանում են մ. թ. I դարին<sup>13</sup>:

Այսպիսով, անոթների ուսուցիկ գարդերով սրվակների արտադրության ժամանակը համարվում է մ. թ. ա. I, մ. թ. II դարերը: Սակայն, ուսումնասիրողների ճնշող մեծամասնությունն այն վերագրում է մ. թ. I դարին, որն ամենահավանականն է: Որպես արտադրության վայր բոլոր դիտնականներն եւ ցույց են տալիս Սիրիան-Սիրոսնը: Պետք է նկատել, որ այլ դարդերի թվում կանթարոսների և այլ անոթների ուսուցիկ պատկերներ կրող սրվակներից մի մասի վրա հանդիպում է էնեոնի անունը, իսկ էնեոնը I դարի սիրոնյան ապակեզործ վարպետ է: Այդ փաստը, ուսուցիկ զարդերով անոթների ժամանակը և տեղը որոշելու հարցում, որոշակիորեն խոսում է վերօնիշյալ տեսակետի օգտին:

Վերին Արտաշատի սրվակը անվիճակիորեն մ. թ. I դարէ սիրոնյան արտադրանք է: Հետաքրքիր է, որ նույն կարասից հայտնաբերված կոնաձև բարձր իրանով սրվակները և զնդունք իրանով, երկու կանթով ցածր ոտքով սրվակը

<sup>10</sup> G. Eissen, Glass. I, New-York, 1927, էջ 234 և հետ., տախտ. 50, նախշերի բնությունը աևս նշված և հաջորդ էջերում, նկ. 114—123:

<sup>11</sup> The Swedish Cyprus Expedition, vol. IV, Part 3 (The Hellenistic and Roman Periods in Cyprus). Stockholm, Lund, 1956, էջ 153, 201 և հետ., նկ. 59.,

<sup>12</sup> Fr. Neuburg, Glass in Antiquity, London, 1949, տախտ. XXVII.<sup>86</sup>

<sup>13</sup> N. P. Toll, The Necropolis. The Excavations at Dura-Europos preliminary Report of the Ninth season of work 1935—1936, New Haven, London, 1946, էջ 13, 52 և հետ., 112 և հետ., տախտ. XLV, Tomb 24—XVI, տախտ. XLVI, Tomb 24—XIV,

Նույնպես ներմուծված են Սիրիայից։ Վերջիններս չեն հակասում ուսուցիկ գարդերով սրվակի թվաղբյուրներ։

Հայաստանի անտիկ շրջանի ապակու ամենահետաքրքիր օրինակներից են Գառնիում, Շողազիրում, Ականի ավաղանում հայտնաբերված երկրաշափական զարդերով սրվակները, որոնք նույնպես կաղապարի մեջ փշելու եղանակով են պատրաստված։ Գեղադիրում դժոնված երկու սրվակն էլ մանուշակաղուն, թափանցիկ, բարակ ապակուց են, Զվածե իրանում այդ սրվակները



Նկ. 3.



Նկ. 4.

հենցում են կլոր, ցածր ոտքի վրա, Սրվակներից մեկի գույզ կանթերը կապավուն, մյուսինը՝ թույլ կանաչավուն-կաթնավուն ապակուց են (նկ. 3): Իրանի ամրող մակերեսը սորիղոնական ուսուցիկ գոտիներով բաժանված է երեք հավասար (1,5 սմ) մասերի, Վերին և ներքին մասերում արված են ուղղահայաց առևակոսներ, իսկ կենտրոնական մասում կան անրնդհատ շարունակվող դարարուն (բազեղ հիշեցնող) գարդեր։

Կաղապարի երկու մասերի միացման տեղում դարդերի նույն ձևով ընդունվելը, ինչպես նաև դարդերի ու սրվակների ընդհանուր շափերի նույնությունը, ցույց են տալիս, որ նրանք պատրաստված են միևնույն կաղապարով, ուրեմն մի արհեստանոցի արտադրանք են (բարձ. 7 սմ, պսակի տր. 2,4 սմ, հաս. տր. 2 սմ). Գրեթե նույն ձեռն ունի Սկանում հայտնաբերված սրվակը, որի վրայի դարդերը ավելի վարպետորեն ու խնամքով են կատարված, իսկ կենտրոնական մասն անջատված է գույզ գոտիով<sup>14</sup>, Ծովինարի (Քոլադոան) սրվակը, որը դեղնավուն, թափանցիկ, բարակ ապակուց է պատրաստված։ Դարդերի մշակմամբ նման է Սկանի սրվակին։ Սակայն, այստեղ բացակայում են վղի ու ոտքի մոտ եղած ուսուցիկ գոտիները (նկ. 4), Սյն, երկուսի

14 Ժ. Դ. Խաչատրյան, Հայաստանում դանված անտիկ ապակու մի քանի նմուշներ, «Տեղեկագիր» հաս. գիտ., № 12, 1964, էջ 74, նկ. 3։

փոխարեն ունի մեկ կանթ (բարձ. 7.2). Այդպիսի դեղնավուն ապակուց Երկ-կանթանի մի սրվակ էլ Սեանի տիկին հայտնաբերել է Ե. Լալայանը<sup>15</sup>:

Գոտու վրա դալարուն զարդերով սրվակներն ամենատարածված ապակյա անոթներից են: Այդպիսիք հայտնաբերեվել են աշխարհի շատ հնավայրերում և պահպան են տարրեր թանգարաններում ու հավաքածուներում: Բոլոր ուսումնասիրողները դրանց պատրիուման վայրը համարում են Միջերկրականի արևելյան ստիլը, Սիրիան՝ Սիկոնը, իսկ արտադրության ժամանակը մ. թ. առ 1. մ. թ. II դարերը<sup>16</sup>:

Մեզ թվում է իրավացի Են այն դիտնականները, որոնք արտադրության վայրը համարում են Սիրիան, ժամանակը՝ I դարը, որ զրանք պատրաստվել են էնեոնի դարոցին պատկանող արհեստանոցներում: Իրոք, այդ սրվակների զարդերը էնեոնի անունը կրող անոթների զարդերի հետ համեմատելիս կարելի է շատ բնդհանրություններ նկատել: Հետևարար, զալարուն զարդերով սրվակների արագագրության հարցում ևս հարկավոր է առաջնությունը աալ սիրիական ապակեդործական էնեոտրոններից ամենախոշորին՝ Սիկոնին որը եղել է էնեոնի զործունեության հիմնաեան կենտրոնը<sup>17</sup>:

Այսպիսով, Հայաստանում հայտնաբերված զալարուն զարդերով սրվակները ներմուծվել են Սիրիայից (Սիկոնից) և պատկանում են մ. թ. I դարին<sup>18</sup>:

**Աղջ թվազրման օգտին** են խոսում նուն զալարուն զարդերով սրվակների հետ հայտնաբերված նյութերու:

Կաղապարի մեջ փշված ուսուցիկ զարդերով սրվակների մյուս մասը սախորդներից հիմնականում տարրերում է կենտրոնական սասում եղած շեղանկյունիներով: Շառնիի սրվակները կենտրոնական գոտու վերին մասում ունեն երկու, իսկ ներքեւում մեկ ուսուցիկ դռափ (նկ. 5), որանց իրանի մակերեսը հավասար բաժանված չէ: Վերին մասն ավելի լայն է (2,5 սմ), քան ներքինը (1,3 սմ): Սրվակներից ամրոգականը պատրաստված է մանուշակուղոյն, ոիչ կարմրին տվող, անդամական դարակ, թափանցիկ ապակուց: Ունի կապտավուն մի կանթ (բարձր. 8 սմ, պսակի տր. 2,8 սմ): Գաւնիի մյուս սրվակը, որի վերին մասը չի պահումանել, պատրաստված է մանուշակագույն բարակ, անթափանցիկ ապակուց (պահապ. մասի բարձր. 5,6 սմ, հատ. տր. 2,2 սմ):

Վերին գեղագլուխ զանգած սրվակի (ՊՊԹ 1836) իրանն ավելի բարձր կենտրոնի շնդանկյունածն զարդերը նման են Գաւնիի սրվակի զորդերին, սակայն ուզգահայցներն ավելի ուսուցիկ ու կոպիտ են: Իրանը նախորդի նման անհավասար է բաժանված, միայն այստեղ ներքին մասն է ավելի լայն (2,5 սմ), կենտրոնը նեղ է (1,3 սմ): Մյուս սրվակներից այն տարրերում է նաև նրանով, որ ուսուցիկ փոխարեն ունի հարթ հատակ (նկ. 6): Վերին գեղագլուխ

<sup>15</sup> Ե. Լալայան, Գամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ. 201.

<sup>16</sup> Г. А. Тиранциан, Материальная культура Армении первых веков н. э. по данным некрополя и бани в Гарни. Автореферат канд. дисс., Ленинград, 1956, էջ 12—13; ժ. գ. և լամբան, նշված աշխ., էջ 74—75.

<sup>17</sup> D. B. Harden. Roman-Syrian glasses with mould-blown inscriptions. JRS, XXV, p. 2; F. M. Heichelheim, Roman-Syria, vol. IV, 1938, էջ 182.

<sup>18</sup> Ж. Д. Хачатрян, Материальная культура древней Армении в V в. до н. э.—IV в. н. э. (по новооткрытным материалам из погребений), Автореферат канд. дисс. Ереван, 1966, էջ 14 և հետո.

սրվակը պատրաստված է բաց կանաչավուն, երբեմն գրեթե անգույն, մախու-  
շակագույն, կարմրավուն՝ ուղղահայաց լայն շերտերով ապակուց (բարձր. 8 սմ,  
պակի տր. 3 սմ, հաս. տր. 2,7 սմ):

Ծեղանկյունաձև զարդերով սրվակ Գայտնիում հայտնաբերվել է նաև նախ-  
կինում: Մուղ զեղնավուն ապակուց երկկանթանի այդ սրվակը գտնվել է № 6  
ղամբարանից<sup>19</sup>: Ծեղանկյունաձև զարդերով սրվակներ քիչ են հայտնի: Գ. Այ-  
ղենի հրապարակած այդպիսի սրվակն ունի ուսուցիկ իրան, որի մակերեսը



Նկ. 5.



Նկ. 6.

երեք հավասար մասի է բաժանված: Այս սրվակը ես, զալարուն զարդերով/  
սրվակների նման, Գ. Այղենը համարում է մ. թ. ա. և մ. թ. 1 դարերի սիդոն-  
յան արտադրանք<sup>20</sup>, Ծեղանկյունաձև զարդերով երկկանթանի սրվակ հայտ-  
նաբերվել է նաև Ուրբնիսիում<sup>21</sup> (I—III դդ.):

Գառնիի № 6 ղամբարանից գտնված շեղանկյունաձև զարդերով երկկան-  
թանի սրվակի մասին խոսելիս Գ. Տիրապյանը գտնում է, որ այդօրինակ  
անոթներ հայտնի են միայն Հայաստանում, ուստի դրանք պատրաստվել են  
տեղում, սիրիական I դարի զալարուն զարդերով սրվակների անմիջական  
աղղեցության տակ<sup>22</sup>:

Կենտրոնում շեղանկյունաձև զարդերով սրվակներն, անշուշտ, իրենց բո-  
լոր մանրամասներով կապված են զալարուն զարդերով սիդոնյան անոթների  
հետ: Դրանք նույնական, ժամանակակից լինելով զալարուն զարդերով սրվակ-  
ներին, պատրաստված են էնեոնի գորոցի ազդեցության ոլորտում զտնվող

19 Բ. Առաքելյան, Գարնի, I, Երևան, 1951, էջ 41, նկ. 33, տախտ. 25, II, Երևան,  
1956, տախտ. XVI:

20 G. Eiseen, Եռոյն ակզնում:

21 Լ. Ա. Չիլաշվիլի, Գործոց Սահմանադրություն, 1964, էջ 167, տախտ. XIV:

22 Գ. Տիրապյան, Ավորեֆերատ, էջ 13; Գ. Տիրապյան, Օպыт периодизации исто-  
рии материальной культуры древней Армении, «Տեղեկագիր», № 2, 1957, էջ 87:

վարպետների կողմից։ Այս սրվակների ինչպես ուղղահայաց ուռուցիկ զարդերը, այնպես էլ շեղանկյունածեկ ուրդերը շատ են հանդիպում էնեոնի անունը կրող անոթների վրա։ Օրինակ, կաղապարի մեջ փշված մի սրվակի իրանը նույնպես հորիղոնական ուռուցիկ գոտիներով բաժանված է երեք մասի, սերքին մասում ուղղահայաց զարդեր են արված, իսկ կենտրոնականում՝ փոքրիկ շեղանկյունիներ<sup>23</sup>, նույնպիսի նախշերով են զարդարված նման իրանով բարձր ոտքով մի քանի ուրիշ անոթներ<sup>24</sup>։ Սիրոնյան լայնարերան խորը թասի երեք մասի բաժանված իրանի մակերեսի վրա, ներքին և վերին մասում, արված են ուղղահայաց ուռուցիկ զարդեր, իսկ կենտրոնական նեղ մասում՝ փոքրիկ շեղանկյունիներ<sup>25</sup>, Այս ամենը մի անգամ ևս հավաստում են շնդանիյունածեկ զարդերով սրվակների սերա կապը դաշտուն նախշերով սիրոնյան անոթների հետ։

Հայաստանում հայտնաբերված շեղանկյունածեկ զարդերով սրվակները, որոնց թիվն այժմ անցնում է շորսից, բացառված չեն, որ արտադրվել են նաև տեղում, Սիրիայից բռնի կամ սեփական նախաձեռնությամբ տեղափոխված ապակեգործների կողմից, որոնք կարող էին հաստատված լինել Հայաստանի խոշոր քաղաքներում։ Հետաքրքիր է այն, որ շեղանկյունածեկ զարդերով սրրվակները, բացառությամբ մեկի, բոլորն էլ զոնվել են Գառնիի գամբարաններում։ Գառնիի և Վերին Գետաշինի շեղանկյունածեկ զարդերով սրվակները, Գ. Այղենի հրատարակած այդօրինակ սրվակի համեմատ, ունեն որոշ առանձնահատկություններ։ Նախ Հայաստանի շեղանկյունածեկ զարդերով սրվակների մակերեսը հավասար կերպով լի բաժանված երեք մասի, ինչպես Դ. Այղենի հրատարակած սրվակի և դաշտուն զարդերով սրվակների մակերեսները։ Այնուհետև, նրանց շեղանկյուն կաղմող գծերի ծայրերը շատ հաճախ չեն միանում, մինչդեռ Գ. Այղենի հրատարակած սրվակինը կանոնավոր ձևով հատվում է։

Գառնիի և Վերին Գետաշենի շնդանկյունածեկ զարդերով սրվակները ժամանակակից են դաշտուն նախշերով սրվակներին, այսինքն՝ պատկանում են Ճ. Թ. I դարին։ Այդ թվագրման օդակի են խոսում նաև նրանց հետ հայտնարկված նյութերը։

Ուշադրության արժանի են դնդանեկ իրանով, առանց կանթի, նուրբ ապակուց պատրաստված սրվակները։ Շառնիում հայտնաբերված այդ անոթներից մեկը թույլ կանալ երանդ ունի (նկ. 7), զլանածեկ երկար վիղ, քի, ներճկված հատակ (բարձր. 9 սմ)։

Իր ձևով վերոհիշյալին նման է Մինդելառուրում № 2 կատակոմբից գտնված սրվակը, թվագրվում I—IV զարերով<sup>26</sup>։ Կանալ երանդով, նուրբ

<sup>23</sup> D. B. Harden, Romano-Syrian glasses with mould-blown inscriptions. *Sinistra* XXIII, ակ. 31. D. B. Harden, Roman mold blown glasses. The Connoisseur, 1940, USA, էջ 102, նկ. II.

<sup>24</sup> M. Rostovtzeff, Social and Economic History of the Hellenistic world. Oxford, 1953, էջ 1022, առաջ. CIX; R. W. Smith, նշվ. աշխ., նկ. 67, 68:

<sup>25</sup> D. B. Harden, Two Tomb-groups of the first century A. D. from Yahmour, Syria. Syria, Tome XXIV, Paris, 1944—1945, տախտ. X, նկ. 21

<sup>26</sup> Г. М. Асланов, Из истории материальной культуры Кавказской Албании I—IV вв. Вопросы истории Кавказской Албании, Баку, 1962, էջ 126 և հետ., 146 և հետ., նկ. 5.

թափանցիկ ապակուց պատրաստված այդպիսի մի սրվակ հայտնի է Սարգիսի I զարկ վերջին, II զարի սկզբին վերաբերող զերեզմաններից<sup>27</sup>, այն կոտրված է ու քիչ թերի: Գտնված սրվակը ձայնակցում է մ.թ. I զարի Տիրիթալիի<sup>28</sup> զերեզմանում (№ 4/5) գտնված վառ կանաչավուն ապակուց պատրաստված սրվակի և Աթենքի<sup>29</sup> Լենորման փողոցում բացված զերեզմանոցում գտնված սրվակի հետ, որը պատկանում է մ.թ. I զար-բրի երկրորդ կեսին: Այդօրինակ I-II դդ. մի սրվակ պահպում է Բելզիայում, Կուրտիուսի թանգարանում<sup>30</sup>,

Գառնիի № 97 դամբարանի սրվակն իր մշակումով և ձևով կարող է պատկանել I-II զարերին:

Շատ հետաքրքիր են № 97 և № 91 դամբարաններից գտնված նույն դույնի ու սրբության ապակյա սրվակները, որոնք շափերով համապատասխանում են վերեւում նկարագրված զնդան իրանով սրվակին: Երկուսի իրանի վրա է ապակու փափուկ վիճակում արված է վեցական կոռ և ձվածն Ներձկված զարդեր (նկ. 8): Մեզ չի հաջողվել Գառնիի ներձկված զարդերով սրվակների նմանը գտնել այլ հնավայրերից հայտնի ապակյա անոթների մեջ: Սակայն, անոթներու տաք վիճակում սեղմելու եղանակով զարդարելու տեխնիկան շատ է տարածված եղել հոռմեական կայսրության մեջ: Ներձկված իրանով անոթներ գտնվել են բազմաթիվ երկրներում, որոնք թվագրվում են տարբեր ժամանակներով, մեծ մասամբ I-III դարերով, հանդիպում են նաև III-V դդ.: II դարից ոչ ուշ թվագրվող կանաչ թափանցիկ ապակուց, քիչ ձգված զնդան իրանով մի սրվակ պահպում է էրմիտաժի անտիկ բաժնում (Ե 849): Ներձկված զարդերով սրվակներ հայտնաբերվել են Եղիպատոսում<sup>31</sup>, Պաղեստինում<sup>32</sup>, Սիրիայում<sup>33</sup>:



Նկ. 7.

<sup>27</sup> Axel von Saldern, Glass from Sardis. AJA, 1962, № 1, էջ սահմ. նկ. 8:

<sup>28</sup> В. Ф. Гайдукевич, Некрополи некоторых Боспорских городов, МИА, 69,

կը 216 և հետ., նկ. 83.1:

<sup>29</sup> Cedric G. Bautier, Graves in Lenormant street, Athens. Hesperia, XXXII, № 2, 1963, սահմ. 45, նկ. T<sub>1</sub>:

<sup>30</sup> Trois Millénaires d'art verrier à travers les Collections Publiques et privées de Belgique. Catalogue général de l'exposition, Liège, 1958, նկ. 162:

<sup>31</sup> D. B. Harden, Roman glass from Karanis. Ann Arbor. Michigan, 1936, էջ. 531, 568, 569, 69; M. C. C. Edgar, Graeco-Egyptian glass. Caire, 1905, նկ. 32, 714:

<sup>32</sup> P. P. Kahane, Some aspects of Ancient glass, from Israel. Antiquity and Survival, vol. II, № 2/3, 1957, Jerusalem; Fr. Neuburg, նշ. աշխ., սահմ. XXIV:

<sup>33</sup> Glaser aus Syrien und Aegypten Mellinghaus, Bavaria, Glasveit, 6. mal, 1957, 1 Jahrgang, Heft 5, էջ 18; W. Froehner, La verrerie Antique Description de la collection charvet. Le pecq, 1879, սահմ. VII<sub>3</sub>, IX, 50, 51:

Հոռմեական կայսրության արևմտյան մարզերում արտադրված նմտն գարդերով անոթները շատ ավելի բաղմաղան են: Ավելի ուշ ժամանակի պատկանողների մեջ գերակշռում են լայնաբերան թասերն ու անոթները: Ներճկած դարդերով տարբեր շափերի սրվակների դգալի մասը պատրաստված են նուրբ ապակուց, որոնցից մի քանիսը հիշեցնում են Գառնիի օրինակները<sup>34:</sup>

Վերջիններս իրենց մշակումով ու ձեռվ կարող են վերաբերել I-II դարերին: Այս թվագրմանը չեն հակառակ նաև № 97 դամբարանում դտնված մյուս իրերը, կավե կճուճը, գալույնները, նետառալաքը, օղերը և այլն, Շառնիի սրվակները հավանաբար ներմուծվել են Եղիպտոսից, որտեղ, ինչպես ապացուցված է Կարանիսում հայտնաբերված նյութերով, II դարում մեծ քանակությամբ նման առակի էր պատրաստվում<sup>35:</sup>



Նկ. 8.

Եղարվեստորեն է ձեռվորված Գառնիում հայտնաբերված բաց կանաչավոն, հաստ, անթափանցիկ տպակուց (տղատ փշելու և դանակով) պատրաստված սրվակը, որի մակերեսը ծածկված է իոիդացիայի թաղանթով: Վրա ապակյա թելից օձաժապավեն ատամնավոր վերադիր դարդ է արված, իսկ սրվակի վզի ներքենի մասում լայն դրխով օձաղարդ է փաթաթված (նկ. 9): Այդ դարդերն արված են սրվակի պատրաստելուց հետո, Սրվակի գեղեցիկ ձևն ու պարզ հարդարանքը նրան տալիս է շատ հաճելի տեսք:

Մեկ կամ մի քանի զույնի ապակյա թելից զանազան ձեր պարզ վերադիր գարդեր անելու տեխնիկան լայն տարածում է ունեցել Հոռմեական կայսրության թե՛ արևմտյան՝ Հունոսյան մարզերում և թե՛ արևելյան երկրներում՝ Եղիպտոսում, Սիրիայում: Սակայն, արևելքում այն մասսայական բնույթի մեջ ստացել և համեմատարար կարձատել կյանք է ունեցել՝ արտադրվելով

<sup>34</sup> Robert Schmidt, Europasches glas, Die sammlung Wilfred Byckley, Berlin, 1927, տախտ. 2, նկ. D; Carl Ant. Nissen, Beschreibung Römischer Altertum, Band I, II, Köln, 1911, տախտ. XXXV, 233, 235; Fr. Fremersdorf, Romisches Bunnglas in Köln, B. III, Köln, 1958, տախտ. 66:

<sup>35</sup> D. B. Harden, Glass from Karanis, զարդենի ցուցակում՝ fabric 2<sup>o</sup> արտադրանք:

միայն II—III դդ. բնթացքում: Այդ ժամանակով են թվաղրվում սիրիական և ալեքսանդրյան համարվող բոլոր անոթները<sup>36</sup>, դարդված է, որ արևելյան կենտրոններից դեպի տրեմուտք օձաժապավեն զարդերով անոթներ չեն արտահանվել: Հակառակ դրան, արևմուտքում այդպիսի դարդարանքով անոթները մեծ բնդուներություն են դտնում և ունենում ավելի մասսայական արտադրություն ու երկարատկ կյանք, բնդհուապ V դ.: Հավանաբար այդ է առաջարկը, որ այդօրինակ ապակու գյուտերն այնտեղ ավելի շատ են<sup>37</sup>: Այս Երևոյթն էլ առիթ է տվել դիտնականներին աարբեր կարծիքներ հայտնելու այն հարցի մասին, թե որաե՞ղ են առաջինը հանդես եկել դրանք և ո՞ր կենտրոնից տարածվել: Խւսումնասիրողների մի մասն այն կարծիքին է, թե այդ տեխնիկան առաջինը հանդես է եկել Հոենուսյան մարդերում, հատկապես Քյոլնի շրջակայքում, որաեղ մեծ քանակությամբ այդպիսի անոթներ են հայտնաբերվել և այնտեղից տարվել արևելք<sup>38</sup>, իսկ մի մասն էլ գտնում է, որ այն ստեղծվել է արևելքում և շրջիկ վարպետների միջոցով աստիճանաբար անցել արևմուտք<sup>39</sup>: Դժվար է ասել, թե կարծիքներից ո՞րն է ճիշտ: Մանավանդ այդ անոթներն իրևնց ձևերով, զարդերով և մյուս առանձնահատկություններով գրեթե չեն տարբերվում իրարից: Դ. Բ. Հարդենը հատուկ ուսումնասիրության առարկա դարձներով դանական վայրերից հայտնաբերված օձաժապավեն զարդերով անոթները, գտնում է, որ դրանք դույներով և դարդերով բավական նման են միմյանց, նա հնարավոր է համարում, որ դրանք առաջինը կարող են հանդես եկած լինել ինչպես արևելքում, այնպես ու արևմուտքում: Այնուամենայնիվ նա հակված է դրանց արևելյան ծաղում վերազրելուն: Հստ Հարդենի, ինչպես բազմազույն, այնպես է, միադույն օձաժապավեն զարդերով անոթները առաջինը պատրաստվել են Եղիպտոսում՝ այն է Ալեքսանդրիայում մ. թ. II դարում, որի ապացույցն են համարվում Կարանիսում դտնված երկու բեկորները: Մոտավորապես այդ նույն ժամանակահատվածում, միայն քիչ ավելի ուշ, միադույն զարդերով և ավելի կանաչավուն սրվակներ և կուեցին արտադրել Սիրիայում: II դարի վերջերին շրջիկ վարպետների կող-



նկ. 9.

ուսումնասիրության առարկա դարձներով դանական վայրերից հայտնաբերված օձաժապավեն զարդերով անոթները, գտնում է, որ դրանք դույներով և դարդերով բավական նման են միմյանց, նա հնարավոր է համարում, որ դրանք առաջինը կարող է եկած լինել ինչպես արևելքում, այնպես ու արևմուտքում: Այնուամենայնիվ նա հակված է դրանց արևելյան ծաղում վերազրելուն: Հստ Հարդենի, ինչպես բազմազույն, այնպես է, միադույն օձաժապավեն զարդերով անոթները առաջինը պատրաստվել են Եղիպտոսում՝ այն է Ալեքսանդրիայում մ. թ. II դարում, որի ապացույցն են համարվում Կարանիսում դտնված երկու բեկորները: Մոտավորապես այդ նույն ժամանակահատվածում, միայն քիչ ավելի ուշ, միադույն զարդերով և ավելի կանաչավուն սրվակներ և կուեցին արտադրել Սիրիայում: II դարի վերջերին շրջիկ վարպետների կող-

<sup>36</sup> Smith R. W., նշվ. աշխ., էջ 154 և հետ., №№ 308, 309, 311—313, 315, 316, 318; Musée de Martemont Catalogue des verres antiques de la collection Ray Winfield Smith, 1954, տախտ. XVII, № 132; G. Eisen, նշվ. աշխ., տախտ. 95; Trois Millénaires d'Art..., № 197; Fr. Neuburg, նշվ. աշխ., տախտ. XVII, 58, 59:

<sup>37</sup> Cl. Isings, Roman Glass from dated finds, Groningen (Djakarta), 1957, Form 35; Fr. Fremersdorf, Romische Glaser mit Fadenauflage in Köln, B. V. Köln, 1959, տախտ. 27—29, 41:

<sup>38</sup> D. B. Harden, Snake-thread glasses found in the East, JRS, vol. XXIV, P. 1, 1934, էջ 50 և հետ., G. Eisen, նշվ. աշխ., էջ 379—381:

<sup>39</sup> D. B. Harden, նշվ. աշխ., էջ 53—54; G. Eisen, նշվ. աշխ., էջ 381:

մից այդ տեխնիկան տարվել է արևմուտք, այսինքն՝ Հռենոսյան երկրներ, որտեղ այն եղել է ոչ թե զոմավոր, այլ միագույն և, լայն տարածում ստանալով, հարատեսել է մինչև V դարը<sup>40</sup>,

Գառնիի օձաժապակեն զարդերով սրվակին իր ձեռվ, դույնով ու զարդաբանքով հար և նման է Կահիրեկից տարված, Բելգիայում պահվող օձաժապակեն զարդերով սրվակը, միայն վերջինիս վզի օձազարդը քիչ ավելի բարձրից է փաթաթված: Այն թվադրվում է II—III դդ. և համարվում է մերձավորարևելյան<sup>41</sup>: Մեր օձաժապակեն սրվակի ինչպես բաց կանաչավուն դույնը, որն հատուկ է I—II դդ. սիրիական ապակուն<sup>42</sup>, այնպես էլ պարզ ու միագույն դարդարանքը թույլ են ասոլիս այն համարել II—III դդ. սիրիական արագարանք:

Անտիկ ապակու ամենադեղեցիկ ու հետաքրքիր նմուշներից են Դառնիուս և Կամո քաղաքում (Նոր Բայազետ) գտնված բաց կանաչավուն, անթափանցիկ, հաստ ապակուց, կաղաղարի մեջ փչելու եղանակով պատրաստված սրբակները:

Գառնիի սրվակի գնդաձև իրանի ամբողջ մակերեսը ծածկված է բրդածելուստներով (բարձր. 7 սմ, հատ. լայն. 4 սմ, պսակի տր. 4,7 սմ), այն հենվում է բրդածելուստների վրա: Գլանաձև, նեղ, կարճ վիզու պատրաստված է առանձին և հետո միացված է իրանին, ուր ներսից իրանի վրա նեղ (0,5 սմ) անցը է բացված (նկ. 10):

Կամոյում «Բերդի գլուխ» կոչված վայրից գտնված անոթը<sup>43</sup> Գառնիի սրվակից տարբերվում է իր չափերով (բարձր. 11,5 սմ, հատ. տր. 3 սմ, պսակի տր. 4,5 սմ): Գնդաձև իրանը ձդված տեսք ունի: Սրվակի վզին և ուսին երեսում են մանուշակագույն ապակուց պատրաստված կանթի հետքերո (նկ. 11):

Բրդածելուստներով սրվակներ հայտնի են նաև այլ երկրներից: Այդպիսի մի սրվակ պահվում է Կահիրեկի թանգարանում: Քիչ այլ ձեռնի մի ենայում պահվող սրվակը, որը մ. Սանկովսկին համարում է սիրիական III—IV դարերի արտադրանք<sup>45</sup>: Վերջինիս իրանը ավելի ձդված տեսք ունի:

Նման զարդերով սրվակը վ. Բ. Հռենեյր նույնպես համարում է սիրիական և թվադրում է I—III դարերով<sup>46</sup>:

Վերոհիշյալի նման մի սրվակ պահվում է Ամերիկայում՝ Վիկտորիա և Ալբերտ թանգարանում, որը, ըստ Ֆ. Նոյբուրգի, սիդոնյան 200—300 թվերի արտադրանք է<sup>47</sup>, հնդաձև իրանով, բրդածելով, ձադարաձև կարճ վզով սրվակներ հայտնի են նաև այլ վայրերից<sup>48</sup>:

<sup>40</sup> D. B. Harden, նշվ. աշխ., էջ 55:

<sup>41</sup> Trois Millénaires d'Art... № 197:

<sup>42</sup> D. B. Harden, նշվ. աշխ., էջ 53; D. B. Harden, Roman glass from Karanis, էջ 169:

<sup>43</sup> Գ. Հ. Միքայելյան, Աւելիքուիի կենտրոնական կիկուպյան ամրոցը, «Պատմա-բանահրական հանդես», № 1, Երևան, 1964, էջ 126 և հետ., նկ. 3, 3:

<sup>44</sup> M. C. C. Edgar, նշվ. աշխ., էջ 38, տախտ. VI, № 3572:

<sup>45</sup> R. Sunkowsky, Antike gläser in Cornunitum und Wien. Wien, 1956, նկ. 30 և.

<sup>46</sup> W. B. Honey, Glass, London, 1946, էջ 26, տախտ. 5, և:

<sup>47</sup> Fr. Neuburg, նշվ. աշխ., էջ 29, նկ. 5:

<sup>48</sup> G. Eisen, Glass, էջ 614, 633, նկ. 154, Morin-Jean, La verrerie en Gaule sous L'empereur romain. Paris, 1913, էջ 29, նկ. 4, 3:

Ինչպես տեսնում ենք, բրդաձև ելուստներով գարդարված հայտնի բոլոր սրվակներն ունեն արևելյան՝ եղիպտական կամ սիրիական ժաղում, հետեաբար այգափափախ սրվակներ պատրաստվե, են միայն արևելյան ապակուդործական կենարոններում,



Նկ. 10.



Նկ. 11.

Գառնիի և Կամո քաղաքի բրդաձև ելուստներով սրվակները հանդիսանում են այդօրինակ լավագույն անոթները: Սրվակների այս տիպն, իր ձևով նման է խաղողի ոռեռուող հիշեցնող անկանթ և կանթով տարբեր գույնի սրվակներին, որոնցից մեծ քանակությամբ արտադրվել են տպակեգործության և արևելյան և արևմտյան կենարոններում<sup>49</sup>:

Գառնիի և Կամո քաղաքի սրվակներն իրենց վզի և պսակի զեպի դուրս լայնացող ձագարաձև տեսքով, որը չի հանդիպում մ. թ. I գարում, թվագրվում են II—III գարերով: Այդ թվագրման օգտին են խոսում նրանց հետ գտնված իրերը, Գտոնիի սրվակի հետ նույն սալարկղից (դամբ. № 61) գտնվել է խոշորահատիկ կավից պատրաստված սպիտակ անգորով պատած վերից վար խոր ակոսով մեկ կանթանի մի սափոր: Բնշ վերաբերում է Կամո քաղաքի բրդաձև ելուստներով սրվակներն, ապա նրա հետ գտնված ապակու պաստայից և կավից պատրաստված ուղունքները բնորոշ են առաջին դարերին:

Գառնիի և Կամո քաղաքի բրդաձև ելուստներով սրվակները ներմուծվել են Սիրիայից՝ Հայաստանին ապակյա առարկաներ մատակարարող ամենա-

<sup>49</sup> R. W. Smith, աշ. աշխ., նկ. 257—259; Cl. Isings, աշ. աշխ., 78, ե, 91, ա; A. Kisa, Das Glas im Altertum, Leipzig, 1908, նկ. 317:

գլխավոր կենտրոնից: Ապակու գումբը նույնպես բնորոշ է I—III դարերի սիրիական արտադրանքին:

Քննության առնվատ ապակյա անոթները մեծ մասամբ փոքր տարողության զանազան ձևերի սրվակներ ու սափորիկներ են, որոնք ծառայել են գեղորայքներ, օծանելիքներ պահելու համար և թաղման ձևերի ժամանակ օդտաղործվող սրվակներ:

Ուսումնասիրությունները ցուց են տալիս, որ Հայաստանն ապակուն ծանոթ է եղել շատ հին ժամանակներից, իսկ մ. թ. ա. I դարից՝ փշելու եղանակի դյուտից հետո, ապակին մուտք գործեց բնուկության կենցաղի մեջ:

Հայաստանը, որ վաղուց առևտրական սերտ փոխարաբերությունների մեջ էր հարևան Երկրների հետ, սկզբնական շրջանում մեծ քանակությամբ ապակյա առարկաներ է ներմուծում: Պարզվում է, որ ներմուծված ապակին հիմնականում մերձավորարկելիան ծագում ունի: Հայաստանին ապակյա իրեր մատակարարող ամենախոշոր Երկիրը հանդիսանում է Սիրիան<sup>50</sup>, մասնավորապես Սիդոնը: Սիրիայից-Սիդոնից են ներմուծվել I և հետագա դարերին պատկանող կաղապարի մեջ փշված Երկրաշափական, բուսական և անոթների ուսուցիչ զարդերով, ինչպես նաև աղատ փշելու եղանակով պատրաստված զանազան ձևի սրվակների մեծ մասը: Մի քանի կարևոր զյուտերից դատելով, կարելի է այնպես, որ դեպի Հայաստան ապակի արտահանող կարևոր կենտրոններից են եղել նաև Եղիպտոսը և Կիպրոսը:

Հայաստանում դեռևս չեն հայտնաբերվել անտիկ շրջանի ապակեղործական արհեստանոցի հետքեր, սակայն զա չի նշանակում, թե այդպիսիք չեն եղել: Հայտնի է, որ անտիկ աշխարհում ապակեղործական արհեստանոցները լինում էին խոշոր քաղաքներում, մինչդեռ Հայաստանում այդպիսի ոչ մի բաղաք դեռևս չի պեղվել: Այդ առումով ևս մեծ կարևորություն են ստանում Արտաշատի, Վաղարշապատի և մյուս խոշոր քաղաքների պեղումները, որոնք կատային ոչ միայն դրա, այլև մի շարք հույժ կարևոր հարցերի պատասխանը:

Չնայած այս ամենը, Հայաստանում հայտնաբերված տոլակուուսումնասիրությունը թույլ է տալիս որոշ խմբեր, հատկապես տիպական առանձնահատկություններից Ելելով, համարել տեղական արտադրանք:

Հավանաբար I դարում շրջիկ վարպետների կողմից ապահով արտադրություն է կաղմակերպվել նաև Հայաստանում: Այդ վարպետները սկզբնական շրջանում աշխատում էին հիմնականում կրկնել ներմուծված բարձրարվեստ ապակյա սրվակները, ուստի ներմուծված համարվող անոթների մի մասը կարող է պատրաստված լինել տեղում, սակայն առայժմ դժվար է տարբերել զրանք: Հետաղայում տեղական վարպետները ստեղծել են նույն ինքնատիպ նոր ձևեր: Այդ արհեստանոցները ինչպես I—II դդ., այնպես էլ հետաղայում, III—IV ոռու արտադրում էին զլիսափորապես աեղական շուկայի համար: Հենց դրանով է բացատրվում այն փաստը, որ Հայաստանում հայտնաբերված ապակյա անոթների մի շարք ձևեր չեն հանդիպում մյուս Երկրներում գտնված ապակե իրերի մեջ:

<sup>50</sup> Գ. Ա. Տիրացյան, Ավորեֆերատ, էջ 11; Գ. Ա. Տիրացյան, Օ торговых связях Армении с Сирией, էջ 76; Ժ. Դ. Խաչատրյան, նշան. աշխ., էջ 77:

Հայաստանի անտիկ շրջանի ապակին վկայում է հարևան և հեռավոր երկրների հետ եղած տնտեսական փոխարաբերությունների մասին. Այն իր ձևերով, տեխնիկական և գեղարվեստական մշակման առանձնահատկություններով կազմում է Առաջավոր Ասիայի և իրեն՝ բուն Հայաստանի անտիկ դարաշրջանի մշակույթի բազկացուցիչ մասը, ամենից ավելի մոտ լինելով սիրիական ապակու։

J. D. KHACHATRIAN

## ON THE GLASS OF ANCIENT ARMENIA

## S u m m a r y

The oldest glass-ware samples discovered in Armenia pertain to the second half of the 2nd millennium. But in Armenia glass had been widespread before our era and in the first centuries A. D. Those cups and flasks both with and without handles, have been of different shapes and color and of a high quality.

The best specimens of flasks are those discovered in Upper Artashat and Garny. They are made by blowing and are considered of Sidonian production of the first century A. D. (figs. 1, 2). The flasks discovered in Garny, Gueghadir and the basin of lake Sevan are worth mentioning. These are made in the same way. some have coiled and others bomb-shaped ornaments.

The flasks with coiled ornaments (figs. 3, 4) come from the first century A. D. and were imported from Syria and possibly from Sidon.

The flasks with bomb-shaped ornaments (figs. 5, 6) were made in Armenia in the first century A. D. in glass-ware workshops founded by Syrian roving craftsmen. The flasks (figs. 7, 8) made by free blowing of light green and fine glass that were discovered in Garny, come from the first and the second centuries A. D. and have possibly been imported from Egypt. Also of interest are flasks discovered in Garny (figs. 9, 10) and in the city of Kamo (fig. 11) which pertain to the second and the third centuries A. D. and are considered of Syrian production.

In the early period Armenia imported glass-ware from abroad (Syria, Egypt, Cyprus).

Traces of ancient period glass-ware workshops have not as yet been discovered in Armenia. But the study of glass makes it possible for some groups, especially those with typical features, to be considered as of local production. Most probably in the first century A. D. glass production was organised by roving craftsmen in Armenia too. In the early period those masters were eager to imitate the imported high quality glass flasks; therefore some of the supposedly imported vessels could have been manufactured locally, but at present it is difficult to distinguish

them. Later on the local craftsmen have devised original new forms too. The local workshops manufactured mainly for the home market. That is the reason why some forms of glass vessels, discovered in Armenia, are not found in other countries. The ancient glass of Armenia proves the economic ties with neighbouring and foreign countries. The technical skill and variety of color and form are of great interest in studying the manufacture of glass not only of Armenia but of the antique world as well.